



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ 35-ԱՄԵԱԿԻՆ
ԱՌԻԹՈՎ**

Կիրակի, 9 Մայիսին, Կլենտեյլի Ս. Աստուածածին եկեղեցին կը տօնէ իր հիմնադրութեան 35-ամեակը:

Այս պատմական տօնախմբութեան առթիւ, Եպիսկոպոսական Ս. Պատարագ պիտի մատուցուի, դպրաց ձեռնադրութիւն եւ ուրարի տուչութիւն պիտի կատարուի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագը պիտի մատուցէ եւ ձեռնադրութեան արարողութիւնը պիտի կատարէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ապա իր պատգամը պիտի փոխանցէ ձեռնադրուողներուն եւ ներկայ հաւատացեալներուն:

Իսկ երեկոյեան ժամը 6-ին, Կլենտեյլի Palladio ճաշարահին մէջ, պիտի տօնակատարուի եկեղեցւոյ 35-ամեակը:

Հանդիսութիւնը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը եւ ներկայութիւնը: Ներկայ պիտի ըլլան նաեւ Ազգ. Վարչութեան անդամներ:

**EPISCOPAL DIVINE LITURGY AND ORDINATIONS ON THE
35TH ANNIVERSARY OF ST. MARY'S CHURCH**

On Sunday, May 9th, 2010, St. Mary's Church of Glendale will celebrate its 35th anniversary. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon on this occasion. On this occasion the Prelate will also ordain acolytes and bestow upon acolytes the privilege of bearing a stole.

In the evening the Prelate will preside over the 35th anniversary banquet which will be held at Palladio banquet hall. Executive Council members will also be in attendance.

**ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ
Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԱՄԱՆԴԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ**

Հինգշաբթի, Մայիս 13-ին, Համբարձման տօնին առիթով, կ.ա. ժամը 10-ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի Կլենտելլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինութեամբ, պիտի պատարագէ Արժ. Տ. Աւետիս Քիւյ. Թորոսեան. պիտի քարոզէ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Յոգշ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան:

Պատարագէն վերջ, Համբարձման տօնին առթիւ, ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Կլենտելլի «Անուշ» ճաշասրահին մէջ. ձեռնարկը, որ կազմակերպուած է Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ, կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը:

Պիտի իրագործուի գեղարուեստական կոկիկ յայտագիր մը:

Մուտքի նուէրն է \$35 տոլար:

Մանրամասնութեանց համար կարելի է հեռաձայնել Ազգային Առաջնորդարան:

**DIVINE LITURGY AND LUNCHEON IN CELEBRATION OF THE
FEAST OF ASCENSION**

In celebration of the Feast of the Ascension of our Lord Jesus Christ, on Thursday, May 13th, 2010, Divine Liturgy will be celebrated at St. Mary's Church in Glendale. The service begins at 10:00 a.m.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over the Liturgy, which will be celebrated by Rev. Fr. Avedis Torossian. Pastor of St. Gregory Church of San Francisco Very Rev. Fr. Vaghinag Meloian will deliver the sermon.

The annual Ascension luncheon will be held after the service at Anoush Restaurant in Glendale. The luncheon is being held under the auspices of the Prelate and is organized by the Prelacy Ladies Auxiliary. Tickets are \$35 and can be purchased by contacting the Prelacy.

**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 38-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ
ՄԱՅԻՍ 14-ԻՆ ԵՒ 15-ԻՆ**

Ուրբաթ, Մայիս 14-ին եւ Շաբաթ, Մայիս 15-ին, Արեւմտեան մեր Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 38-րդ նստաշրջանը պիտի գումարուի Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ

Արք. Մարտիրոսեանի եւ հիւրընկալութեամբ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգաբարձութեան:

Օրակարգի վրայ են մեր եկեղեցիներու, վարժարաններու եւ առհասարակ ազգային կեանքի տարբեր կալուածներուն մէջ տարուող աշխատանքներուն ընթացքն ու արդիւնքը: Տեղի պիտի ունենայ նաեւ Կրօնական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան նոր կազմերու ընտրութիւն:

Ազգային Երեսփոխանական Ժողովի նախօրեակին, նոյն աշխատանքներու ծիրին մէջ, նմանապէս Ազգ. Առաջնորդարանի սրահին մէջ, Չորեքշաբթի, 12 Մայիսին տեղի պիտի ունենայ Թեմիս հոգեւորականաց համագումարը, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր:

Իսկ Երեքշաբթի, Մայիս 11-ի երեկոյեան, Ազգային վարչութեան հրաւերով, տեղի պիտի ունենայ մեր եկեղեցիներու հոգաբարձական կազմերու ժողովը:

Այս ժողովները առիթ են միասնաբար քննարկելու մեր Թեմը յուզող հասարակաց հարցերն ու ճշդելու անոնց լուծման միջոցները, այդ նպատակով կազմելու համապատասխան ծրագիրներ:

PRELACY 38TH REPRESENTATIVES ASSEMBLY TO BE HELD ON MAY 14 & 15

The 38th Representatives Assembly will convene on May 14th, 2010, at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over the meeting which is being hosted by Holy Martyrs Church of Encino.

The two-day meeting will cover a number of issues related to our churches, schools, and committees serving under the Prelacy. Religious and Executive Council elections will also take place.

In preparation for the Representatives Assembly, a clergy conference will be held at the Prelacy on Wednesday, May 12th, and a meeting of our churches' Boards of Trustees on Tuesday, May 11th.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆՆ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՊԱՏՈՍԱՐԱՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան Չորեքշաբթի, 5 Մայիսի կեսօրին այցելեցին Զայաստանի հիւպատոսարան եւ հանդիպում ունեցան գլխաւոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեանի ու անձնակազմի անդամներու հետ:

Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան ատենապետը առաջին այցելութիւնը կու տային հիւպատոսարանի նոր գրասենեակը, դիւանագիտական ներկայացուցչութեան Կլենտէյլ փոխադրութենէն ետք: Անոնք շնորհաւորեցին գլխաւոր հիւպատոսն ու անձնակազմը՝ նոր աշխատավայրին համար:

Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու հայկական կեանքին մէջ արձանագրուած նորագոյն ու ընթացքի մէջ եղող զարգացումներուն, ինչպէս նաեւ մայր հայրենիքին հետ արտերկրի հայութեան ու յատկապէս Կրեմտեան Միացեալ Նահանգներու մեր ժողովուրդին կապերուն մասին:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL CHAIRMAN VISITED THE ARMENIAN CONSULATE



On Wednesday, May 5th, 2010, H.E. the Prelate, and Executive Council Chairman Dr. Garo Agopian visited the Consulate General of Armenia where they met with Consul General the Honorable Grigor Hovhannisyan and Consulate staff.

Given that it was the first visit of the Prelate and Executive Council Chair to the Consulate since their move to Glendale, they congratulated the Consul General and staff on their new headquarters. They also had the opportunity to discuss current issues facing Armenia and relations between Armenia and the Diaspora.
